3. ՔՅՈՒՉՈՒԿ ԱՀՄԱԴ

Կէղի, չէղի թագավոր մը կէղի։ Ըդ թագավորին մե տղա կէղի։ Ըդ տղի անուն Քյուչուկ Ահմադ կէղի, աֆանդիմ սոյլարըմ[1]։ Ժուք մի, ժամանակ մի կմնա մեջ, ըդ թագավոր կմեռնի։

Թագավոր օր թը կմեռնի, ըդ Քյուչուկ Ահմադ տասն օրվա մեջ կմխսա, հ'ըմեն գիտա թագավորու խեր խեյրաթ։

Օր էնեց պրծավ, հ'մեն տվեց խեր, ասես փարե մե մնա՞ց Քյուչուկ Ահմադի, չոփ չմնաց։

Ըդ Քյուչուկ Ահմադն էր ըսեց. «Աջեր ես փարե մե չունիմ, ես ֆլան թագավորի տղեն Քյուչուկ Ահմադն եմ, ես լուսուն էրթամ վի՞նից փարե մե ուզիմ, օր թը իտամ խաց առնիմ, ուտիմ»։ Կեսա. «Վալլահ, լուսուն գելնիմ ու կէրթամ ուրուշ աշխարք»։

Լուսումութն էր, Քյուչուկ Ահմադն էլավ, կանչեց ուր հ'առեճի, ուր պապու մարթեր, ուր դրկիցներ առավ էկավ, ըսեց.

— Դրկիցներ, բարեկըմներ, թը խաց ու ճուր, ամեն բան, լավութեն էրեր եք ընձիկ, իմ պապուն, խալալ էնեք ընձիկ, ես էր-կըրեն կէրթամ։

Ըդ մարթն ու բարեկամ, թը դուռ դրկից կանան ըսեցին. «Քյուչուկ Ահմադ, արի, մ'էրթա»։

Ըսեց.— Չէ՛ կարելի ա։

Ըսեցին.— Էնպես քըղի ընդունինք թագավոր, քընց քու պապէն էլի լավ։

---

1 Աղայիս ասեմ (Ս. Կ.)։

Ըսեց.— Չէ՛, ախպեր, մանցեք բարև, ես կէրթամ։

Ու ելավ, խաթր առավ ընդոնց մոտեն ու ճամփու խետ ընգավ։ Շատ ու քիչ ճամբախ էկավ, աչքեց ուր ետև օր թը լավ տասնուխինգ տարեկնիկ չեհել մի ուր ետև կվազի ու գիգա։ Էկավ. էկավ Քյուչուկ Ահմադին ըսեց.

—Բարի օր քըզիկ, Քյուչուկ Ահմադ։

Ըսեց.— Աստծու խերն ու բարին, ախպեր ջան։

Ըսեց.— Քյուչուկ Ահմադ, դեռ՞ր պտի էրթաս։

Ըսեց.— Ախպեր, վոլլա, պտի էրթամ ուրուշ աշխարք կարիբութեն՝ աշխատելու։

Ըսեց.— Քյուչուկ Ահմադ, ես լէ կէղիմ քըզի ախպեր։

Ըսեց.— Շատ լավ կէղի, դու լէ էղի ընձի ախպեր։

Հ'ելան էդ ու Քյուչուկ Ահմադ քելին ու գացին։ Կաչքին ուրանց ետև, տեսին օր հանդե մե լավ տղե մի գյուլուլի պես գիգա։

Գիդա կխասի ինոնց։

Կեսա.— Բարի օր ծըզի, ախպրտիք։

Կեսա.— Աստծու խեր ու բարին, ախպեր ջան։

Կեսա.— Ախպեր ջան, դե՞ որ պըտի էրթաք։

Կեսա.— Վոլլա, պտի էրթանք կարիրութեն մըզի աշխատինը։

Կեսա.— Աջեր ախպեր ջան, ընձի լէ չէնի՞ք ծըզի ախպեր։

Քյուչուկ Ահմադ կվերցու կեսա.— Ինչի՞ չէնինք մըզի ախպեր, քեզանե լավ ախպեր պտի տեսնի՞նք։

Աֆանդըմ սոյլարըմ. իտոնք գելին իրեք ախպեր ու դընկնին ուրանց ճամխու խետ ու կէրթան։ Շատ ու քիչ կէրթան, կէրթան իրեք ճամխու կցվան կկանին։ Կտեսին օր թը՝ մե ծեր ու խալիվոր մը, հ'ոդա ճամխու օրթալախ կանուկ ա։

Քյուչուկ Ահմադ կեսա.— Բարի օր քըզի, խալիվոր ջան։

Կեսա.— Վա՜յ, աստծու խե՜ր պարին, Քյուչուկ Ահմադ ջան (չէ օր խրեշտակ մարթ կէղնի)։

Կեսա.— Պապե ջան, էս ճամխներ դեռ՞ր վե կէրթա։

Կեսա.— Քյուչուկ Ահմադ, կուրբան էղնիմ քու արևուն, էս ճամբախ դեմ կէրթա Հնդստան, ինա ճամբախ լէ կէրթա դե՞մ Գյուլգստան, ինա բարակ ճամբախ էրթացող չէկեր ա։

Կեսա.— Մեք կէրթանք Հնդստան, ինչու էն պարակ ճամխով էրթանք։

Իդոնքն ա աստծու հ'առեճ, ըդ խալվոր մարթու հ'առեճ կէղին ախպեր։

Քյուչուկ Ահմադ կեսա.— Հալիվոր մարթ, դու աստծու հ'առեճ

շհադա էղիս (վկա լինես) մեք էրթանք մկա Հնդստան քաղքի մեջ կաշխատինք, ես աշխատիմ հարուր օսկի, ինա ախպրտիք ամեկ աշխատին մեկ օսկի, տաս օսկի, պտի էնտեխեն օր դարձանք էկանք էստի, պտի խալալ իրար խետ կիսինք, կամ ինդոնք աշխատան հարուր օսկի, ես լէ տաս օսկի, էդմլա իգանք հ'ոդա, քու հ'առնեմ կիսինք ու էրթանք ամեկ մեր տներ։

Իդոնքն ա խալիվորու խաթըր կառնին ու գընգնին ճամբախ, Հնդստան գիտան ուրանց հ'առեմ, շատ ու քիչ ճամբախ կէրթան. աֆանդըմ սոյլարըմ։

Քուչուկ Ահմադ կեսա.— Տըղեներ, կանեք հ'ոդա, ես ծըղի բան մի ըսիմ։

Ըդտեխ տղեներ կանին, կեսին.— Դե՛ ասա։

Կեսա.— Ախպրտիք, դինաք, ես ինչ ա կնսիմ, մեք իրեք լէ էս ճամխով չէրթանք,— կեսա,— մեկ մըզնե թըխ էրթա Հնդստան, մեկ էրթա Գուլդըստան, մեկ լէ թըխ էրթա էն բարակ ճամխով Արաբստան։

Կեսին.— Թող էղնի։

Կեսա.— Ախպրտիք, դուք դինա՞ք ինչի խատար ես հմլա կեսիմ.— կեսա,— կարելի ա օր թը իրեքս լէ օր էրթանք հ'ոնի, պարապ մնանք, գործ չէղի,— կեսա,— ախպեր ջան, դու գնա Հընդըստան, ըս մեր պզտիկ ախպեր լէ թըխ էրթա Գուլդըստան, ես լէ կէրթամ էս բարակ ճամխով՝ Արաբստան։

Էդի ա Արաբստանի ճամբախ դիտա ուր հ'առեմ, էմեկել ախպեր լէ կէրթա Հնդստանի ճամխով, մեկ լէ կէրթա Գուլգըստանի ճամխով։ Ինդոնքն ա խաթըր իրարուց կառնին, իրար երես կպաքին ու գընգնին ուրանց ճամխի խետ։

Շատ կէրթան, քիչ կէրթան, Քյուչուկ Ահմադ կդառնա ետևանց կկղանչե ուր ախպրտոց, կեսա.

— Ախպրտիք, արիք ծըղի բան մե ըսիմ ու գացեք, աստված ծեղ խետ էղի։

Ախպրտիքն ի կկանին ու կեսին.— Քյուչուկ Ահմադ, մըզիկ ի՞նչ կեսիս։

Կեսա.— Ախպեր ջան, դու դինաս ինչ կասիմ,— կեսա,— հալբաթ դուք ի՞նչ փեշագի տերն իք, օր կէրթաք։

Ըն միջնեկ ախպեր կեսա,— Ես օր թը փեշակ ունիմ, ես մե թըխթփած մարթ իմ, օր թը ես իմ թուխթ աչքիմ, ես գինամ թը դու Արաբստանի քաղքի մեջ ի՞նչ կէնիս։

Կեսա.— Էդիկ շատ լավ բան ա։ Քյուչուկ Ահմադն ա, մեկել պզտիկ ախպոր մոտեն կխարցու, կեսա.

— Ախպեր, դո՞ւ ինչ փեշակի տերն իս։

Կեսա.— Ես լէ մե լողվոր մարթ իմ,— կեսա,— օր թը ծով իգա մըզի ռաստ, կշալկիմ քըզի լէ, իմ ախպոր, կառնիմ, կէրթամ էլ գյամի, մամի մըզի հարկավոր չէ։

Կեսա.— Էդի քընց հ՚ըմենին լավն ա։

Ըդ էրկու ախպերն ին կեսին.— Քյուչուկ Ահմադ, քու արևուն մեռնինք, քու փեշա՞կն ինչ ա, մենք լէ իմանանք։

Կեսա.— Իմ փեշակ լէ, տես իմ թուր իմ վրեն ա,— կեսա,— իմ խոդին իմ թուրն ա,— կեսա,— օր թը ես քաշեցի առա իմ ծեռ իմ թուր, էս էրկիր իգան իմ վրեն, չկերնան իմ վրեն. հ՚մեն կճարդիմ,— կեսա,— օր թը ուրիշ մարթ քաշեց առավ ուր ծեռք՝ ես կմեռնիմ, իմ խոդին էն ա։

Իդհաղսի ինոնք կեսին.— Ըդ հ՚մենուց լավ ա, ո՞ր պտի քաշա քու սուր։

Խաթըր կառնին իրարուց, իրար երես կպաքին ու կեսա.

— Դե գնացեք, աստված ծեր խետն էղի։

Աֆանդըմ սոյլարըմ։ Քյուչուկ Ահմադն էր Արաբստանի ճամբախ տվեց ուր հ՚առեճ, գնաց։ Ջէն տեսավ օր՝ էդ խալիվոր էկավ ուրին ռաստ։

Քյուչուկ Ահմադ կեսա.— Բարի օր քըզի, խալիվոր ջան։

Ըսեց.— Աստծու խեր պարին, Քյուչուկ Ահմադ ջան,— ըսեց.— Քյուչուկ Ահմադ դեռ՞ պտի էրթաս։

Ըսեց.— Ես պտի էրթամ Արաբստանի ճամխով։

Ըսեց.— Ջէ՞, ես քըզի ըսի, էս ճամխով մէրթա, էրթացող չէկեր ա։

Ըսեց.— Վոլլահ, ես իմ պապու շիրաթ (խոսք) չթորկիմ իմ վրեն,— ըսեց.— իմ պապ ընձի ըսեց օր ըն ճամխով օր թը կէրթաս, օր թը ախ կեղու, ինչ կէղի գնա, յան աստված գիտա, յան չիտա, ես լէ իմ պապու շիրաթ չթորկիմ, կէրթամ. յան աստված տա, յան չի տա։

Խալիվորու մոտեն ա բարև գիտա, բարև կառնի ու կքելա։

Խալիվորն ա կեսա.— Լաո՛, կանի քըզի խոսք մի ըսիմ, ու գնա, դու քու աստված։—Կեսա,—Լաո՛, դու կէրթաս իրեք խատ դև ռաստ գիգա քըզի,— կեսա,— քըզի մողաթ կեցի ըդտեխ, քըզի խափլեթունով չսպանին։— Էդպես խոսք ըսեց ըդրան ու ըսեց.— Գնա՛։

Քյուչուկ Ահմադն էր ինգավ ճամխու խետ ու գնաց։ Աֆանդըմ սոյլարըմ. շատ գնաց, քիչ գնաց, էկա՛վ մե սիվտակ քոշկի մի

ռաստ էկավ։ Աչքեց օր թը մե սիրո՞ւն, լավ խուռնիկ-խրեղեն ռունգ ախչիկ մի հ՚ոգի նստուկ, ուրին թավնի (գորգ) կգործա։ Ըդ ախչկա աչք օր կքիսի Քյուչուկ Ահմադ, ըդ ախչկա խելք գընցնի էնտեխ կպատի, Քյուչուկ Ահմադն լէ էնգի կպատի։

Իդոնց խելք օր թը գիգա իգոնց գլուխ, գելին էնտեխ քիչ մե կերուխում կէնին, ըդ ախչիկն ա կեսա։

— Ա՛յ տղա, խազա՞ր ափսոս քըզի։

Կեսա.— Ինչի՞, ախչիկ։

Կեսա.— Մկա օր թը Սիվտակ դևն էկավ, քու ճոչ կտոր քու անգանջ կթորկա։ Հ՚ելի քըզի տուր քոշկի ետև, մկա Սիվտակ դև գիգա, օր էկավ իմ սիրուն զինք կթալա կփաթվի ընձիկ, ըն ժամանակ օր թը կփաթվի ընձիկ, դու թող ու փախի ուրիշ ճամխով մի, բալքի պրծիս։

Քյուչուկ Ահմադն ա կեսա,— Թո՛ղ էղի։

Ախչիկն ա, դուռ կզարկի վրեն, ախպորս ասեմ, Քյուչուկ Ահմադ զինք գիտա քոշկի ետև։ Կաչկա ճամխու խետ, օր թը ի՞նչ կաչկա, տեսի օր թը Սիվտակ դև ծառ մի քոքեխան էներ ա, ամե ճղեն նեճիր մի կախեր ա, էն դեն էնպես գիգա, էնպես թոզ ու դուման կհանա օր էլ աստված նշանց չիտա։ Քյուչուկ Ահմադն էր, էն տեխից ըսեց՝ «Վոլլա, ըդ դև օր թը ընձի կլուլի ես պտի էրթամ ուրին հ՚առեճ»։ Քյուչուկ Ահմադն ա, թուր կքաշա ուր վրավեն, կէրթա ճամխու վրեն, կտեսի օր հանդե դև ֆշալեն, վռալեն գիգա։

Դևն ա գիգա կմոտիկնա Քյուչուկ Ահմադին, կեսա.

—Օ՛յ խոզածին, քըզի բռնա օր թը չխալիս, էս էղավ իրեք տարի օր խոզածնի միս չկերեր իմ, իմ ակռեք ժանգոտեր ա։

Քյուչուկ Ահմադ կեսա.— Արի՛, աստված օղորմած ա, կարեչի ա, օր թը ես քըզի կըսմաթ էղեր իմ, էկեր իմ քըզի։

Էն ու Քյուչուկ Ահմագ կխասին իրար։ Շատ ու քիչ զիրար կտանին ու կբերին, Քյուչուկ Ահմադ կկղանչա. «Ցա հագենա բող ծիավոր սուրբ Սարդիս, դու խասնիս», թուր օր թը կթալա, դևի վիզ կկտրա, դև կպատի գետին, զանգնջներ կկտրա, կդրա ուր ջոր, կառի գիգա։ Գիգա, գիգա, գիգա ախչկա՝ դևի կնկա մոտ, կեսա.

— Էս, տղա դու ի՞մալ էկար։

Կեսա.— Հը՞, ես Քյուչուկ Ահմագ էղիմ ու զդև չսպանի՞մ։ — Անգնջներն ի կհանա ու գիտա դևի կնկան շանցք։

Դևի կնիկն ա, գելի կփաթվի Քյուչուկ Ահմադի վիզ, կեսա.

— Մեռնիմ քու արևուն, քու էրեսին, դու էդ ի՞մալ ընձի ըդ դևից ազատ էրեցիր։

Իդոնքն ա կեր ու խում կէնին հար իրիկուն, յորղան դոշակ ըդ խորոտիկ ախչիկ կբերա կթալա ուր տակ։ Քյուչուկ Ահմադն ու ախչիկ ելան պառկան վրը յորղան դոշկին։

Աֆանդրմ սոյլարըմ. ըդ Քյուչուկ Ահմադն էր, թուր տկլոզցուց, խանեց, դրեց ուր մեջ ղախչկան։

Ըդ ախչիկն էր ըսեց.— Քյուչուկ Ահմադ, քու արևուն-էրեսին մեռնիմ, օր թը դու ընձի չխավներ, ընչի՞ զդևն սպանիր։

Ըսեց.— Ես քըզի կխավնիմ լէ, դու իմ խոդեկան քուրն իս, քըզիկ ես ուզեցի իմ միջնեկ ախպոր համար, հանդե Հնդստանու քաղաքն ա, ջուար կէնիմ իգա։

Էդպես օր թը ըսեց, ըդ ախչիկն էր ելավ հագավ ուր շորեր, ըսեց.

— Ես քու խարսն իմ, մեղա աստծու։

Լուսումութն էր, աղօթարան օր բացվավ վրը հաղրրներուն, Քյուչուկ Ահմադն էլավ, ինչ օր թամբիհ-մամբիխ օր կար էրեց ուր ախպոր կնկան, ըսեց.

— Տե՛ս, ես կգնամ, էս դուռ ես կմորհիմ (կնքել). էս դուռ օր թը բացվավ՝ վայ էկե քըզի, թյությունի պես քըզի կփըրթիմ, հարի ես գամ։— Ըդրա կերակուր-մերակուր հաղրեց ու գնաց։

Ըդ ախչիկ ըսեց.— Քյուչուկ Ահմադ, էս դևի ախպրտիք քու ճամխի վրեն ին, քըզի մուաթ կաց։

Ըսեց.— Կէրթամ, աստված օղորմած ա։

Շատ ու քիչ ճամբախ գնաց։ Գնաց մե կարմիր քոշկի մե ռաստ էկավ, աչքեց օր թը իմալ խուռնիկ-խրեղեն ախչիկ մե կա հանդն, օր թը մարթ ուտա, չիմա թամաշա էնա։

Էդ ախչկա աչք օր քիսավ Քյուչուկ Ահմադին, իդրա խոնջան յոթ տեխով կտրավ, ըսեց. «Յարաբի էդմլա սիրուն տղա լէ էղե՞ր ա»։ Իդրա խելք գնաց, էնտեխ պատավ, ընդրան լէ՝ ըստեխ։

Իդոնքն էր, ուրանց խելք օր էկավ ուրանց գլոխ, ելան, շիտ-կան, նստան։

Ըդ ախչիկն էր ըսեց.— Ա՛յ տղա, ափսո՞ս քու ջահելություն, — ըսեց,— էսքան ախչիկ էղեր իմ, քու պես սիրուն տղա չտեսեր իմ, հմա ինչպե՞ս էնիմ օր հիմի Կարմիր դև օր թը էկավ, քըզի մայան կկլուլի։

Ըսեց.— Աստված օղորմած ի, ես Սիվտակ դև սպաներ իմ, էկեր իմ իդրա դորու ջան, յան աստված տա ընձի, յան տա ընդրան։

Ըսեց.— Տղա՛, արի իմ անգետ խելաց անգաշ էրա, դու ափ-սոս երիտասարդ տղա իս, Սիվտակ դև ու Կարմիր դև մեկ չի,— ըսեց,— Կարմիր դև զոռլի է։

Ըսեց.— Ի՞մալ էնիմ ապա։

Ըսեց.— Ելի քըզի տուր քոշկի մե տեխ, քըզի փաթթիմ խսիլ, կանի հ՚ոդի, էնի յանի խոտ կառնի։

Ըսեց.— Թըխ էղնի։

Ըսեց.— Էնիկ օր թը իմ սիրուն զինք կուգա կթալա իմ վրեն, դու փախի գնա, բալքի թե պրծնիս։

Կեսա,— Շատ աղեկ։

Հ՚ելավ Քյուչուկ Ահմադին փաթթեց խսիլ, դրեց քոշկի ետև, էկավ դուռ դարկնց վրեն, ու էկավ նստավ ուրին։

Էղի ու Քյուչուկ Ահմադ տեսավ օր թը ինչ տեսնա, Կարմիր դևն ա էնպես գիդա, օր թը սար ու ծոր ըդրա ախեն կդողան։

Քյուչուկ Ահմադն ա գելի գիգա ըդրա հ՚առեճ ու կեսա. «Ցան աստված պրտի տա, յան պտի առնի», կէրթա հ՚առեճ կտեսնա օր Կարմիր դև էրկու ծառ քոկեխան էրեր ա, ամե ճղուց նեճիր մե կախեր ա ու գիգա։ Էնպես գիգա օր ուր օտներ էնպես կպոռտա գետին, ինչպես օր գութան էտա գետին կձևա (հերկել)։

Գելի գիգա հ՚առեճ, էդ դևի աչք օր կքիսի Քյուչուկ Ահմադ, կըսե.

— Օհ, խողածին, քու դլխուն արևուն մեռնիմ, քըզի բռնի օր չխալիս,— կեսա,— ըս էղավ հինգ տարի ա օր թը իմ բերան խոդածնի միս չքիսեր ա, իմ ակռեք ժանգ բռներ ա։

Կեսա.— Դև, արի կե նոր շքրի (շնորհակալ եղիր)։

Դևն ի գիգա, էդ ու դև կխասնին իրար, կխասին իրար, շատ կտանին ու կբերին, Քյուչուկ Ահմադն ուր սուր կտկլոզցու, կղանչե ուր աստված ու մեկ կղարկա ուր վզին, խետ օր կզարկա ըդ դևի վիգն ա գելի, կթռի հ՚օցքի դե էն պատի ետև։ Կառի դևի անգնջներ, կթալա ուր ջոբ, գիգա Կարմիր դևի կնկա մոտ։

Էդ Կարմիր դևի կնիկն կեսա.— Ա՛յ տղա, դու իմա՞լ էկար, դևն էսօր անգընցեր ա։

Ըսեց.—Ախչի՛կ, Կարմիր դև կուրբան էրեցի քըզիկ,— կխանա զանգջներ կիտա ախչկան շանցք։

Ախչիկն ա կեսա,— Քյուչուկ Ահմադ, կուրբան էղիմ քըզիկ. ես քըզիկ, դու ընձիկ։

Քյուչուկ Ահմադն ա կեսա.— Շատ լավ կէղի։

Էդ ախչիկ իրիկուն բերեց կութնի յորղան դոշակ թալեց, բաժ մի գետնեն պանցր։ Էդ ախչիկն ու տղեն պառկան։ Քյուչուկ Ահմադ օր թը պառկավ, տկլոզցուց ուր սուր ու դրեց ախչկա մեջ ու ուրին։

Էդ ախչիկն էր վերցուց ըսեց.— Քյուչուկ Ահմադ, քու արևուն

4—1086

գլխուն մեռնիմ,— ասեց,— որ թը դու ընձի չխավներ ընչի՞ կարմիր դևն սպանիր, ընձի թողիր անտեր անտիրական։

Քյուչուկ Ահմադն ասեց.— Ես քըզիկ կխավնիմ, ախչիկ, դու շատ լավ խորոտիկ ախչիկ իս, բայց դու իմ խոդեկան քուրն իս,— ասեց,— ես քըզի ուզեցի,— ասեց,— իմ պզտիկ ախպոր խամար։

Ընպես որ թը ասեց, ըդ ախչիկն էր հ'ելավ ուր շորեր խագավ, էլավ խարս, կանավ Քյուչուկ Ահմադի հ'առեճ։

Աֆանդըմ սոյլարիմ։ Լուսումուտն էր, աղոթրան որ թը բացվավ, Քյուչուկ Ահմադն էր հ'ելավ ամեն բան ընդրան տվեց, կերակուլ-մերակուլ, ու հ'ելավ ասեց ախչկան.

— Ես քու դուռ կկողպիմ, հարի ես գամ, որ թը բացվավ, քըզի թյությունի պես կրբթիմ։ Էլավ ախչկա խաթրն առավ ու գնաց։

Ախչիկն էր, Քյուչուկ Ահմադին ասեց.— Քյուչուկ Ահմադ, քու արևուն, էրեսին մեռնիմ, կանի քըզիկ բան մե ասիմ, հ'ելի գնա,— ասեց,— կէրթաս Սև դև քու հ'առեճն է, քեզի մուաթ կեցի,— ասեց,— Սև դև շատ զորլի դև ա, որ թը կէրթաս, էս էղավ քառասուն տարի որ էնտեխ էրթացող էգացող չէղեր ա, ըս էրկու դևեր ինոր ճոչ ախպրտինքն ին, էս ախպրտիք լէ չչխնան էն դևի դեն էրթան. էրթաս դու գինաս, չէրթաս դու դինաս։

Ասեց.— Ախպոր կնիկ, վոլլա պըտի էրթամ։

Գնաց։ Շատ ու քիչ գնաց, գնա՞ց սև քոշկին ռաստ էկավ, աչքեց որ ի՞նչ աչքեց, օսկի ծամ ախչիկ ըդ քոշկի մեջ նստուկ ա, ուրին նըխշ կէնա։ Ըդ Քյուչուկ Ահմադի աչք որ թը քիսավ օսկե ծամ, Օսկե ծամի աչքեր լէ որ թը քիսավ Քյուչուկ Ահմադին, էրկսի խելքն լէ գնաց, պատան գետին։

Իգոնց խելք որ թը էկավ ուրանց գլոխ, էլան շիտկան, նստան։

Քյուչուկ Ահմադն էր ասեց. «Է՜յ, տեր աստված, կարելի որ թը ես Սև դևն սպանիմ, էս ախչիկ էղի ընձի կըսմաթ»։ Օսկի ծամ լէ հ'ելավ նստավ, ասեց. «Է՜յ, տեր աստված, յարաբ էդըմլա խորոտ տղա էղե՞ր ա, տեր աստված, հարդե էս տղեն կէնիս ընձի կըսմաթ, էնիս, թը չէնիս իմ խոգին առնիս, ես էլ ինոր ետև ումր չունիմ»։

Օսկի ծամն էր ասեց.— Այ տղա, ափսոս քու ջահելութեն, խերախողլա, աստծու բարուն, ղու չէկեր իս, ես քըզի չտեսե, մկա որ թը Սև դևն էկավ, մայամ քըզի կկլու, քու դարդ լէ կմնա իմ սիրտ։

Ասեց.— Ապա ես իմա՞լ էնիմ։

Ասեց.—Գելիս, քըզի դիտաս էսա քոշկի ետև։

Ասեց.— Օսկի ծամ, ես էկեր իմ Սև դևի դորուշան, ես ինոր

էրկու ախպեր լէ սպաներ իմ, հարդե չավատնաս, առ իդա լէ իդոր էրկու ախպոր անգնջներ։

Օսկի ծամ օր կտեսի անգնջներ, կեսա.— Տղա, վոլլա զէն էրկու դև սպաներ ես, կավատնամ, համա էս Սև դև զոռ ա, չկարաս սպանես։

Ըսեց.— Դելիմ կէրթամ Սև դևու հ'առեճ, յան աստված գիտա ընձիկ, յան գիտա դևուն։

Էդի ա գելի կտեսի օր հանդե դև մժկի պես գիգա։ Գիգա ճամխու հ'առեճ ու կկանի։ Ըդ տղեն ա կտեսի օր դև դենի գիգա, կաչքա օր էնի էրկու դզի ծառ քոքեխան էրեր ա ու գիգա, էնպես կպոռդա դետին օր, սար ու ծոր հ'առեճ կդողա, ուր պոռդուկ գետին կէղի ձոր ու գիգա։

Աչք օր կքիսա տղին, կեսա.— Օ՜յ խողածին, քըզի բոնի օր չխալիս, էս էղավ տաս տարի ա օր իմ բերան խողածնի միս չքիսեր ա, էդ իմա՞լ իմ ախպրտանց կըսմաթ չէղեր իս, էզար ընձի կըսմաթ։

Քյուչուկ Ահմադն ա կեսա.— Սև դև, արի կե, նոր ջքրի, իսա անգնջներ օր կան, քու ախպրտանց անգնջներն ի, իդհախսուն քու դեորն ա։

Էդ դևու աչք օր կքիսի անգնջներ ուր կուտում կկոտրի։

Քյուչուկ Ահմադն ու Սև դևն գիդան իրար ու կղարկին, էնպես ըդ դաջտն ու թուրան կխերկին ջրմ իրիկուն, ախբր մեկ զմեկ չախթա։ էն ժամանակին կնստին, կգնջանան։

Քյուչուկ Ահմադ կեսա.— Դև՛, արի նստի ռհաթինք, գելինք կկռվինք, յան աստված ընձիկ գիտա, յան քըզիկ։

Իդոնքն ա կնստին կռհաթին։ Օսկի ծամն ա դորբին դրեր ա աչքեր, կաչքա օր թը ո՞ր մեկն կախթա։ Կաչքա օր, մեկն էնտեխն պատեր ա, մեկ լէ էնտեխ։ Կաչքա էրկուսն լէ գնացին՝ «Հայ վախ, համ դևն գնաց, համ լէ տղեն,— կեսա,— աջաբ ես ի՞նչ էնիմ, ես էդըմլա մացի իդա սարի դլոխ, նա տեր ունիմ, նա տիրական»։ Զէն տեսի օր Քյուչուկ Ահմադն ու Սև դև էլան կռվան։ Օսկի ծամն էր ըսեց՝ «Շուքուր քեզմե աստված, իդախսուն ախբր մեկն կպրծի իդա իմ վրեն»։

Իդոնքն օր կղարկին հ'իրարու, շատ ու քիչ կղարկին հ'իրարու, ըդ Քյուչուկ Ահմադն ա կքաջա զուր սուր ու կեսա. «Ցա, խացն ու գինին, տերն կենդանին». էդի ա օր թը կղարկա, Սև դևի գլոխ կկտրի կէրթա հեռու կպատի էն տեխ։ Իդրան անգնջներ լէ կկտրա, կդրա ջոր ու գիգա։

Օսկի ծամ լէ կիշկա օր թը հանդե Քյուչուկ Ահմադն էկավ, դևն չէկավ։

Ըդ Քյուչուկ Ահմադն ա կէրթա Օսկե ծամու մոտ կկանի, կեսա.

— Օսկե ծամ, փա՜ռք աստծու, զարկի Սև դև լէ սպանի,— կհանա անգնջներ գիտա շանցք։

Օսկի ծամ օր կտեսնի Սև դևու անգնջներ, կփաթվի Քյուչուկ Ահմադ ու կեսա.

— Քու գլխուն արևուն մեռնիմ, Քյուչուկ Ահմադ, դու իմա՞։ ընձի ազատ էրիր ըդ դևից,— կեսա.— դու ընձի, ես քըզի։

Էդ էրկուս կփաթվին իրար, կուրախանան։ Իրիկուն օր թը դիգա, բերեցին ղուբնի յորղան դոշակ թալեցին։ Օսկի ծամ ու Քյուչուկ Ահմադ փաթվան հիրար ու պառկան. լամփ վառել չկա, բան չկա, իդրա ծամեր լուս գիտա։ Էն էրկուս փաթվան հ՚իրար, լախբրդի ուրանց քեֆ խասուցին հարի լուսումուտուն։

Օսկե ծամին քառասուն օդա կէղի։ Ըդ Քյուչուկ Ահմադն ու Օսկե ծամ գելին կէրթան մըշ քառասուն օդին ման գիգան։ Ըդ քառասուն օդին, քառասուն բալնիք կէղի։ Ըդ քառասուն բալնիք կառնին ուրանց մոտ, ըդ քառասուն օդի դուռ ամեկ դուռ կբանան ու թամաշա կէնին։ Եռասունուին օդի դուռ Օսկի ծամ կբանա, կաչքա, ըդ մեկ օդին չբանա։

Քյուչուկ Ահմադ կեսա.— Ըս մեկ օդի դուռ չ՚բացերիս։

Օսկի ծամն ա կեսա.— Բացի, աչքի, հ՚որի՞ն չբացեր եմ։

Կեսա.— Իլլահի ըսա դուռ չբացեր ես, բաց թամաշա էնենք։

Կէնա, չէնա Օսկի ծամի խետ չէղի, կեսա.— էդա օդի դուռ պըտի բանաս։

Օսկի ծամն ա Քյուչուկ Ահմադին կեսա.— էսա օդեն կբանամ, ամա տես օր մենք ըստեխից վնաս կտեսնանք։

Կեսա.— Ինչպե՞ս վնաս պտի տեսնանք, բաց մի թամաշա էնինք։ Օսկի ծամն ա կբանա։ Կբանան կաչքին, ի՞նչ կաչքին, կտեսին օր հանդե բաղնիս մե, դեհ մի պաղ ճուր, դեհ մի տաք ճուր, լավ խորոտիկ հավգներ, մարթ մտի մեջ անուշ լողընա։

Քյուչուկ Ահմադ կեսա.— Օսկի ծամ, դու էդի ընձի լայեղ չտեսիր օր բաներ թամաշա էնեք, մըզի՝ լողանեք, քեֆ էնենք։

Կեսա.— Քըզի լայեղ կտեսեք, հըմա պտի վնաս տեսիք ըս բաղնըսից։

Կեսա.— Ի՞նչ վնաս պտի տեսիք, ի՞նչ կա ըդրա մեջ։

Իդոնքն ա կտկլոզնան ու կմտին բաղնսի հավզի մեջ։ Կլողնան ուրանց քեֆ, լախբրդին կէնին։ Ըդ ժամանակին օր էդրանք օր

կլողանան, քեզ կէնին, մաղ մի ըդրա գլխի ծամերուց կփրցի. կընդնի հավզի միջով, կընգնի ծովու երեսն ու վեր ու կէրթա։ Ըդ մաղն ա կէրթա ուրիշ թագավորի մը սարի հ՝առեճ գելի դուս, զինք կուտա ափ ու կկանի։ Ըդ թագավորի սեյիսն ա, ամեն օր ծիանք կրերա վըր ճրուն, խրթխրթին, նա ճուր կխմին, նա բան, օրե-օր մաղ փելք կիտա, ծիանք ճուր չխմին։ Ըդ թագավորի ծիանք լէ էն-պես կէղին օր ծարավու կուտումներ կկոտրի։ Սեյիսն ա գելի կէր-թա թագավորի մոտ, կխոսա, կեսա.

— Թագավոր, սախ կենաս, ինչ խաղար ծիանք օր կտանիմ, կէնիմ չէնիմ ճուր չխմին։

Կեսա.— Հ՝որի՞ ճուր չխմին։

Կեսա.— Բան մե կա ճուրի էրես լուս գիտա, էլ չգինամ ընդ-րանից ա, թե ընդրանիդ չէ։

Թագավորն ա, կկղանչա, լողվոր մարթ մէ կրերա, կեսա։

— Լողվոր, գնա մտիր ըդ ծովու մեջ, աչքա տեսանք հլա սանք իդա ի՞նչ ա մեջ ծովուն փելք գիտա, գնա բի հարգե օսկի էղավ՝ քի, օսկի չէղավ՝ ընձի։

Ըդ լողվոր մարթն ա, ուր ջորեր կհանա կմտի ծովու մեջ, կէր-թա կառնի ղէդ մաղ ու գիգա, կառի, գիգա ու կտանի, կդնա թա-գավորի մոտ։ Թագավորն ա, կտեսի օր, իրկուն օր էղավ, ըդ մաղ հմալ լուս տվեց օր, ըդ քաղքի մեջ դիբ լուս տվեց։

«Աչեբ ես դիտենք էսի ի՞նչ էր». էդի ա կկղանչա ուր մարթեր, հ՝մեն կառի իգա. «Սանք հալա մարթ չը գինա էսա ի՞նչ ա»։ Ինչ-քան օր էդ էրկրի մեջ մարթ կա, գիգան կաչքին, չգինան ինչ ա։

Ջադուքար պառավ մի կէլնի էդ էրկիր, էն լէ գիգա թագավո-րի մոտ, կեսա.

— Թագավոր սախ կենա.— կեսա,— դու,— կեսա,— զէդ մաղն իս տեսեր իս, դու օր թը ըդրա տերն տեսիս, ի՞նչ կէսիս,— կեսա.— իդրա տեր Օսկի ծամն ա, ինոր մազից պրծե էկե, հավ-զու մեջից ծովն ի վի, էկե հ՝ոդա, իդրա տեր հմալ սիրուն ա, օր թը դու թագավորմ ես՝ օր իչքիս, քու խելք քու գլխուց կթռցուս։

Կեսա.— Աչեբ, պառավ, դու դինա՞ս, ըդ Օսկի ծամ ի՞նչ տե-խրն ա։

Կեսա.— Ջյուչուկ Ահմադ կա, ֆիլան թագավորի տղեն ա, գնաց Արաբստանու քաղաք, իրեք հատ դև սպանեց։ Ըն էրկու դևի կնկտիք ուզեց ուր էրկու ախպրտոց, բայց ըդ Սև դևն սպանեց, Օսկի ծամ լէ Սև դևու կնիկն ա, մկա Օսկի ծամ լէ առեր ա ուրին։

Կեսա. —Կարո՞ղ իս էրթաս առնիս Օսկի ծամ, իգաս։

Կեսա.— Ինչո՞ւ չկերնամ։

Կեսա.— Քու կիշռանով օսկի գիտամ քըզի, պառավ, գնա Օսկի ծամ առ էկո ընձիկ։

Կեսա.— Շատ լավ կէղի։

Գելի պառվու կիշռանով օսկի գիտա պառվուն, ու պառավ ճամբու կդրա։

Աֆանդըմ սոյլըրիմ։ Պառավ, օձ կէնա ուրին կամչի, կխեծնա ուրին ծծում, թըզրեխ կառնա ուր ծեռ, կխեծնա ու կէրթա, կեսա՝ «Սուրհան ալլահ, սուրհան ալլահ, թըզբեխ կուրբան օլում սանա» (Բարձյալն աստված, բարձյալն աստված, համրիչ քեզի զոհ ըլլամ)։

Շատ ու քիչ կէրթա, ախպորն օր թը ասիմ, Սիվտակ դևի քոշկին ռաստ գիգա։ Կաչքա օր թը խուռնիկ-խրեղեն ախչիկ մե ըդա քոշկի մեջ նստուկ ա, կեսա.

— Ախչիկ ջան, դուռ կբանա՞ս իգամ հ՝ոդի քիչ մե ոըհաթիմ, լուսուն գելիմ կէրթամ հաջ։

Ախչիկն ա կեսա.— Պառավ, խո քոռ չիս, կտեսիս օր թը Քյուչուկ Ահմադ դուռ մոհրեր ա գացի, կրնա՞մ բանամ։

Էդի ա կէնա, չէնա, դուռ չբանա ու դընգի ճամխու խետ, դելի շատ ու քիչ կէրթա։ Կէրթա կարմիր քոշկին ռաստ գիգա։ Կաչքի օր խուռնիկ-խրեղեն ախչիկ մի քոշկի մեջ նստուկ ի, օր չուտես չխմես թամաշա էնիս։

Կեսա.— Ախչի՛կ, դուռ կբանա՞ս, իգամ օդի քիչ մե ոըհաթիմ, էրթամ, իմ ընկերտիք գացեր ին հաջ, քիչ մե ոըհաթիմ էրթամ։

Կեսա. —Պառավ, խո քոռ չի՞ս, կտեսի՞ս օր հանդե դուռ մոհրուկ ա, Քյուչուկ Ահմադ դուռ մոհրեր ա ու գացեր ա, ես կրնա՞մ դուռ բանամ, Քյուչուկ Ահմադ գիգա, ընձիկ կսպանա։

Աֆանդըմ սոյլըրիմ պառավ. ըդ ախչիկ օր էմալ կեսա, կինի ճամփախ, կէրթա։ Շատ ու քիչ կէրթա, սև քոշկին ռաստ գիգա։ Կաչքև օր Օսկի ծամ հ՝ոդի նստուկ ա, նըխշ կէնա։

Կեսա.— Օսկի ծամ, կթորկի՞ս իգամ էգտեխ քիչ մե ոըհաթիմ ու էրթամ, իմ ընկերտիք գացեր ին հաջ, ես մացեր իմ ետև, քիչ մը ոըհաթիմ ու էրթամ։

Օսկի ծամն ա կեսա.— Օր թը գու իգաս, էնպես պտի զարկիմ քըզի օր գետնի տակ էրթաս։

Կէնա, չէնա Օսկի ծամ չթորկա էրթա տուն։ Էդի ա, կնստի Օսկի ծամի դուռ։ Օսկի ծամն ա, կվերցու քար մե օր զարկա պառվուն, օր թը քիսի, գետնի տակ կտաներ, քար չքիսի պառավ հ՝օցքի գելի ու կփախի։

Ըդ պառավն ա, կէրթա հեռուն, ճամխու մեջտեխն ա կնստի։

Ըդ Քյուչուկ Ահմադն լէ գացեր ա նեճիր։ Ըդ պառավն ա կտանա հեռո՞ւ ուր ծծում կպախա, գիգա կնստի։ Կտեսի օր Քյուչուկ Ահմադ հանդէ ծառ մի քոկեխան էրեր ա, ամեկ ճղից նեճեր մի կախե ու գիգա։ Ըդ պառավն ա կէրթա, ու գինք կթալա Քյուչուկ Ահմադի օտներու տակ։ Քյուչուկ Ահմադն ա կեսա.

— Ա՛յ խեղճ պառավ, ի՞նչ էղեր ա քըզիկ, օր էդպես կթափըլդիս իմ օտներու տակ։

Կեսա.— Հա՜յ, Քյուչուկ Ահմադ, քու գլխո՞ւն, քու արևո՞ւն մեռնիմ, իմ ընկերտիք գացած ին հաջ, իմ օտներ խամցեր ա. չկրնամ էրթամ խասիմ։

Կեսա.— Գնա՛, խասի։

Կեսա.— Իգամ տուն, քիչ մե ուրհաթիմ ու էրթամ խասիմ ընկերտաց։

Կեսա.— Արի տուն ուրհաթի, խաց լէ կե, հ'ելի գնա, վո՞ն ա չթորկե։

Կեսա.— Չէ՞, Օսկի ծամ, կէնիմ, չէնիմ չթորկա իգամ տուն։

Կեսա.— Արի՛, արի՛, բանմ լէ չըսա քի։

Էդի ա, գրնգնի Քյուչուկ Ահմադի ետև ու գիգա Օսկի ծամի դուռ։

Օսկի ծամն ա կելի, գլոխ փանջարից գիտա դուս, կբոռա, կեսա.

— Պառա՜վ, օր թը դու իգաս, քըզի կսպանիմ, գետնի տակ կէցկիմ։

Քյուչուկ Ահմադն[1] ա կեսա.— Օսկի ծամ, քըզի ի՞նչ էղավ. խեղճ պառավ մե, թըխ գա ուրին ուրհաթի ելի էրթա։

Կեսա.— Չէ՛, իլահի, պառավ իմ տուն չի գա, ըդա պառավ օր կա՝ սատանա ա, օր թը էկավ մեր տուն, մենք վնաս կտեսինք։

Կեսա.— Ի՞նչ վնաս պտի տեսիք, վերցում պառվուն զարկիմ էրթա, պատի ինադեխ, փիտնա։

Կէնա, չէնա Օսկի ծամ Քյուչուկ Ահմադի խետ չէզնի։ Էդ պառավն ա, գիգա տուն, կնստի։ Տաս, տասնխինգ օր կմնա իդոնց տուն, չէրթա։ Իդոնքն ա, ուրանց սեր կթալին պառվու վրեն։ Պառավ լէ ժուք ու ժամանակ մե կմնա։ Իդհախսի մե ժամանակ օր հ'ընցավ, պառավն ա Օսկի ծամին ըսեց.

— Օսկի ծամ, լաո՜, օր թը իգա դևերու էլ ու աշիրն էկան,

---

1 Բնագրում ծամն (Ս. Կ.)։

մենք իմա՞լ էնինք։ Կզարկին Քյուչուկ Ահմադ կսպանին, ընձի ու քեզի լէ կառին, կէրթան ուրանց հետ։

Օսկի ծամն ա վերցուց պառվուն ըսեց.— Ինոնք իմա՞լ զՔյուչուկ Ահմադին կսպանին, Քյուչուկ Ահմադ իդոնց խերն գիդա։

Կեսա.— Աիբը Քյուչուկ Ահմադ մե մարթ ա, աշխըրքին իմա՞լ կսպանա։

Օսկի ծամն ա կեսա.— Ախբը Քյուչուկ Ահմադ չվախենա, ես ինչ գինամ, ինչպես պտի սպանա։

Կեսա.— Օր հըմալ ա, Քյուչուկ Ահմադ օր թը էկավ, խարցու, ասա. «Քյուչուկ Ահմադ, ախբը դու ինչպիսի փեշակի տերն իս, օր չվախենաս էստեխ միճակ» (մենակ)։

Կեսա.— Ես ի՞մալ խարցում։

Պառավ կեսա.— Օսկի ծամ, լաո՛, իրկուն օր թը Քյուչուկ Ահմադն էկավ տուն նեճիրից, քու նիաթ էնա ու նստի։ Ըն ժամանակին օր թը էկավ, էն կեսա. «Օսկի ծամ, ինչի՞ քու նիաթ էներ իս», դու լէ ըսա. «Ես իմա՞լ իմ նիաթ չէնիմ, լուսուն ըս դևերու էլեր, աշիրներ գիդան, քըզիկ կմորթին, մզիկ լէ կառնին կէրթան». իդհախս Քյուչուկ Ահմադ կեսա. «Մ՝վախենա, ինոնք չկրնան մեր վրեն». օր ըսեց. «Չկրնան իմ վրեն», դու լէ ըսա. «Հալբաթ քու փեշակն ի՞նչ ա, օր չկրնան քու վրեն»։

Քյուչուկ Ահմադն էր, էկավ տուն։ Աչքեց օր թը Օսկի ծամ նիաթ կախե, կեսա.

— Օսկի ծամ, աստված խերն էնա, հ՝որի՞ քու նիաթ էդմլա կախեր իս։

Իդոնքն ա, գելին կպառկին ուրանց ջլերու մեջ։ Էդ պառավ լէ դրուկ ա խստու քուն, կխռա։ Քյուչուկ Ահմադն ա, կեսա.

— Օսկի ծամ, քու նիաթ էսօր ընձի իսկի դյուր չի գա։

Կեսա.— Օր ես նիաթ չէնիմ, ապա ո՞րն էնա։

Կեսա.— Հալբաթ ի՞նչ էղեր ա քըզի, անոթի իս՝ ընձի ասա, ծարավ իս՝ ընձի ասա, կաշքիմ օր թը ամեն բան պատրաստ ա քու հ՝առեճ։

Կեսա.— Ի՞նչ էնիմ խաց ու ճուր, վոլլա, դևերու էլ, աշիր էկան մըզի սպանին, մենք ի՞նչ անինք։ (Պառավ լէ անկանջ կէնա)։

Կեսա.— Օսկի ծամ, ո՞ր կէնա ընձի սպանա,— կեսա,— ըս թագավորներ հ՝ման հ՝իգան իմ վրեն, չկերնան իմ վրեն, սարֆրաս կեցի, իսկի մը վախենա։

Կեսա.— Հալբաթ քու խունարն ի՞նչ ա, օր չկերնան քըզի սպանին (պառավ լէ խստու կխռա ու անկանջ կէնա)։

Կեսա.— Գինա՞ս իմ խունարն ինչ ա,— կեսա,— իմ խունար օր թը կա՝ըս իմ թուրն ա, իմ թուր օր թը քաշեցի առա իմ ծեռ, էրկիր էրկրով գան, չկերնան իմ վրեն, ես դիր կսպանիմ. իմ խոդին օր կա, իմ թուրն ա, օր ուրիշ մարթ քաշեց. ես կմեռնիմ։

Կեսա.— Հալրաթ վո՞ն պտի քաշա օր թը դու չքաշիս։

Իդոնք օր էդպես կեսին, պառավ կլսա ինչ օր կեսին։

Պառավ կեսա. «Դու ընձի ինչ էնիս, դու քնի, ես գինամ ինչ կէնիմ քու գլուխ»։

Քյուչուկ Ահմադն ա, նեճիրից էկի, նեղեցի ու քներ ա, փաթթած ին իրար վրեն, քրտնած ու քնած ին։ Իդոնքն ա, խորունկ քուն ին, պառավ դելնա, գելի, ծեռ կթալա, իդրա թուր կքաշա ու կալանից կխանա։ Կխանա. «Կարելի ա օր Քյուչուկ Ահմադ սուտ էսեց». ծեռ կգրա Քյուչուկ Ահմադի փորուն, կտեսնա օր Քյուչուկ Ահմադ մեռուկ ա, խոդի չկա։

Պառավն ա, կառնի իդրա թուր, կէրթա յոթ ճամխու կղզու վրեն կնանի ու կպալանդրկա ու կթալա, կթալա, թուր կէրթա, կպատի ծովու օրթալըխ։ Գիդա օր թը Քյուչուկ Ահմադ մեռուկ, ինչ օր էսա տաս, տասնխինդ տարի մեռուկ էլի, Օսկի ծամ լէ քնուկ կէղնի։

Պառավն ա, կպարկա Օսկի ծամին գիմցու, կեսա.

— Օսկի ծամ, Օսկի ծամ, հ՝ելի, հ՝ելի էրթանք, Քյուչուկ Ահմադ մեռուկ ա, ի՞նչ կաչքիս։

Ըդ Օսկի ծամն ա, կթփվի էգտեխ գիլա, կլալուչքի, պառավն ա կեսա.

— Օսկի ծամ, հ՝ելի էրթանք, ընչի՞ վրեն գիլաս։ Ինոր թուր տարեր իմ թալեր իմ ծովու օրթալըխ, ինչի՞ գիլաս,— կեսա,— շուտով հ՝ելի էրթանք, քենի դևերու էլ ու աշիր դիդան մըզի սպանին։ Հ՝ելի էրթանք, քըզի էնիմ թագավորու կնիկ։

Օսկի ծամն ա կեսա.— Պառավ, ախըր Քյուչուկ Ահմադն սպանեցիր,— կեսա,— կամաց ես Քյուչուկ Ահմադի էրեսներ պաքիմ ու թորկինք էրթանք։

Քյուչուկ Ահմադի էրես կպաքա, չարշավ կթալա վըր էրեսին, օր թը ճանճեր չթափին վրեն ու դելի կխեծցու ծծում զէդ Օսկի ծամ ու կքշա։ Քշա, դեմ գիդա թագավորու սարին, գելնի դուրս։ Օսկի ծամն ա, լուսուն պտի փսակին վըր թագավորին։ Օսկի ծամն էնպես լուս տվեր ա, օր թը քաղքի լամփեր չկպուն։ Ըդ Օսկի ծամն ա, ծեռ մի աղու կառի, մեկ խանջալ, կեսա.

— Ընձի քառսուն օր օր տվեք, քառսուն օր օր թըմմավ, նոր

կփսակվիմ վըր թագավորին, ըդ քառսուն օր պըտի Քյուչուկ Ահմադի վրեն ուք պահիմ։

Ըդիք քառսուն օր կպախա։ Դառնանք Քյուչուկ Ահմադի ախպըրտանց վրեն։

Ըդ թըխթիմաց ախպերն ա, ըսեց. «Հե՛յ, նալաթ իգա խում կաթ ուտողին, էսա էղավ իրեք չորս տարի, իմ ախպրտիք գացած ին կուրրաթ, ամեկ քաղաք մի գացած, ես թուխթ չբանա՞մ թը սանք, մեռած ին, ապրած ին, սանք ի՞նչ բանի վրա ին»։ Ուր թուխթն ա կաչքա, տեսնի օր թը Գուլգըստանու քաղքի ախպեր վըր ուր բանին ա, օրական կառնի տաս կուռուշ մե մաջիթա, էն մեկել Քյուչուկ Ահմադ կաչքա, տեսնի օր գացեր ա Սիվտակ դևու սպաներ ա, Սիվտակ դևի կնիկ ուղեր ա ուր միջնեկ ախպոր, ելի գացի Կարմիր դև սպաներ ա, զԿարմիր դևի կնիկ լէ ուզեր ա ուր պզտիկ ախպոր կնկան, հ՝ելե գացեր ա Սև դև սպաներ ա, Օսկի ծամ ուզեր ա ուրին, հ՝ելած գացած քառսուն օրեն օլորտած ին, ըն մեծ դուռ Օսկի ծամ էներ չէներ ա չթողեր ա բացեր ու Քյուչուկ Ահմադ դըրեր ա վրեն, դուռ բացած ին, գացած հավզի մեջ լոխկըցած ին, մազ մի ընդրա մազից պրծե դացե ծովն ի վե, թագավորու սարի հ՝առեճ։ Ըդ թագավորի սեյիս բերեր ա ծիանք, խրտնած ին, ճուր չխմեր ին, սեյիս գացեր ա թագավորուն ըսեր ա, թագավորն ա ճամխեր ա լողվոր մարթ մե ըսեր ա, սանք հալա էդի ի՞նչ ա։ Լողվոր մարթ գացեր ա, բերեր ա գրեր ա թագավորի մոտ։ Թագավոր ամե մարթ առեր ա էկեր ա վրեն տեսեր ա հլա ըդ ի՞նչ ա։

Աֆանդիմ սոյլարիմ. ես քըզի իմալ օր նախլ էրեցի, ըդ թըխթիմաց ախպեր մեկիկ-մեկիկ կարդաց իմացավ, ըդ թխթբաց ախպերն էր, օր տեսավ թը Քյուչուկ Ահմադի հալ իմալ ֆանայա. հ՝ելավ ուր ինչ խադար օր ապրանք կեր, ըդ քաղքի մեջ թափեց ու հ՝ելավ ճամբախ բռնեց ու գնաց։ Հ՝ելավ գնաց Գյուլգըստանա քաղաք, գնաց լողվոր ախպոր մոտ։

Լողվոր ախպերն ա ըսեց.— Ախպեր ջան, դու բարով խերով էկար, ի՞նչ խաբար։

Ըսեց.— Հալ ու քեֆյաթ էսպես էզեր ա մեր Քյուչուկ Ահմադ ախպոր գլուխ։

Իդոնքն ա գելին ուրանց ինչ խադար ապրանք կա՝ կթափին ու կէրթան։ Կէրթան ըդ խալիվորու մոտ, կեսին։

— Բարով, խալիվոր ջան։

Կեսա.— Աստծու խեր բարին ծըզիկ, ախպրտիք,— կեսա,— կէրթաք ո՞ւր։

Կեսա.— Վոլլա, հալ քեֆյաթ մեր Քյուչուկ Ահմադ ախպոր դլոխ էսպես բան էլեր ա, ի՞նչ էնինք։

Էդ խալիվորն ա կկանչա քամու աստված, ավազան-գավազան քաման քեշ կբերա, կեսա.

— Ավազան, գավազան քաման քեշ, ես ծեզանից կուզիմ էս բոպեին օր թը էս տղեքներուն խասուք Քյուչուկ Ահմադի մոտ։

Ըդ ավազան-գավազան քաման քեշն ա՝ զտղեք կվերցուն, կտանին սիվտակ քոշկի մոտ կդրին։ Ըդ տղեքներն ա կտեսին օր թը խուռնիկ-խրեղեն ախչիկ մի էդտեխ գրուկ ա։

Կեսա.— Ախչիկ, էսպես մարթ մե էս տեխրանք չի տե՞սեր իք։

Կեսա.— Վոլլա, ես թե տեսեր իմ, Քյուչուկ Ահմադ կա, էկավ Սիվտակ դև սպանեց, ընձի ուզեց ուր միջնեկ ախպոր ու գնաց։

Միջնեկ ախպերն ա կեսա.— Վոլլա, իդրա միջնեկ ախպեր օր կա, ես իմ,— կեսա,— մանցի հ՚ոդի, ես կէրթամ Քյուչուկ Ահմադ կսախցում, հարդե չսախցուցի, նա գիգամ, նա բան, ես հ՚ոնի կմեռնիմ, դու լէ հ՚ոդի։

Ըդոնքն ա գելին ավազան-գավազան իդրանց կվերցուն, կվերցուն, կտանին կարմիր քոշկի մոտ կդնին։ Կտեսնին օր թը խուռնիկ-խրեղեն ախչիկ մի էդտեխ նստուկ ա, կեսա.

— Ախչիկ, դու իսկի էսպես տղե մի չտե՞սեր իս։

Կեսա.— Ես օր թը տեսեր իմ Քյուչուկ Ահմադ կա, էկավ զԿարմիր դևն սպանեց, ընձի ուզեց ուր պզտիկ ախպոր ու գնաց։

Պզտիկ ախպերն ա կեսա,— Վոլլա, իդրա պզտիկ ախպերն ես իմ,— կեսա,— կէրթամ, հարգե Քյուչուկ Ահմադ կսախցում, սախցում, հարգե չսախցուցի, ես հ՚ոնի կմեռնիմ, դու հ՚ոդի մեռի, կզարկիմ ընձի հ՚ոնի կսպանիմ, դու լէ հ՚ոդի քըզի սպանի։

Կեսին.— Դե ավազան-գավազան քաման քեշ դե վերցու։ Կվերցուն կտանին կդնին Քյուչուկ Ահմադի քոշկի մեջ։ Ավազան-գավազան քաման քեշ օդի կխամբարձին, կէրթան կխասին խալիվորուն։

Ըդ տղեքներն ա կէրթան դուռ կբանան, կէրթան Քյուչուկ Ահմադի վրեն կկանին։ Ըդ տեխն ա ինոնք կզարնին ուրանց էրեսներ, գուլան ու կլալուչքին, Քյուչուկ Ահմադ չկա։

Ըդ թխթբաց ախպերն ա կեսա, —Ախպեր ջան, արի չարա մե էնինք, լալով ֆայդա չէնա։

Կեսա.— Իմա՞լ էնինք։

Լողվոր ախպոր կեսա.— Ախպեր, չէ՞ դու կեսիր՝ «Ես լողվոր իմ»։

Կեսա.— Խա՜, վոլլա, ես լողվոր իմ։

Կեսա.— Ախպեր ջան, հ՝ելի էրթանք յոթ ծովու կղզու վրեն։ Էդ թղթքաց ախպերն ա լողվոր ախպոր կեսա.— Ախպեր ջան,— կեսա,— տես, իսա պառվու օտաց տեխն ա,— կեսա,— թուր լէ հանդէ ծովու օրթալըխ պատուկ ա։

Ըն լողվոր ախպերն ա կտկլոզնա, կմտի ծովու մեջ, կէրթա ըդ ծովու օրթալըխ կկանի։

Էդ թխթքաց ախպերն ա կեսա.— Ախպեր, համա էդտեխ օր դու կաներ իս, էդ տեխն ա, հ՝ըմա քըզի թալ տակ։

Էդ լողվոր ախպերն ա, հըմա կըսկի, կէրթա կմտի տակ։ Էդ տեխն ա կօլորտի, չօլորտի, էդ սուր չգտնի, թռի դելի դուրս, կեսա.

— Վոլլա, ախպեր, չկերնամ գտիմ։

Կեսա.— Ախպեր, մեկ լէ քըզի թալ, գտար չխո դտար, օր չգըտար՝ չխո դու օդի խեխթի, ես լէ օդա կթալիմ խեխթիմ։

Էդի ա զինք կթալա էլի կէրթա տակ, կօլորտի, կօլորտի զէդ թուր կդտի։ Էն ժամանակն ա օր թը կդտի, թուրն ա ինդի էրկու քարի օրթալըխ ժանգոտեր ա։ Կէնա, չէնա՝ չպրծի, ու կթռի գելի դուրս։

Կեսա.—Ախպեր, վոլլա գտա, ամա կէնիմ, չէնիմ չելի, ժանգոտեր ա, կպեր ա էրկու քարի օրթալըխ։

Կեսա.— Ախպեր ջան, մեկ լէ քըզի թալ, իրեք անգամ կթմմի, հարգե հ՝էլավ, հ՝ելավ, չէլավ, դու օդի քե թալ խեխթի, ես լէ օդա զիս կզարկիմ եսպանիմ։

Էդ տղեն ա մեկ լէ զինք կթալա, աստծու խրատանքով կառե զիՅուր ու կելի։

Կառին զէդ թուր գիգան, կեցկին կալանի մեջ (պատյան), էդ Քյուչուկ Ահմադն ա պուտ-պուտ քրտինք գիտա վրեն, գելի կնստի։

Քյուչուկ Ահմադն ա հ՝ելավ նստավ, աչքեց օր թը ուր ախպրրտիք նստուկ ին ուր կուշտ, կեսա.

— Վա՜յ, աստված խերն էնա, ախպրտիք դո՞ւք իք օդա։

Կեսա. — Վոլլա, էդ տեխրանք աշխատանք չէղավ մենք լէ թողեցինք էկանք օդա։

Կեսա.— Է՜յ ախպրտիք, ես էսօր ինչ խրդար իմ քնիր իմ, քրնուց իմ խելք կէրթա.— կեսա.— ախպրտիք, Օսկի ծամ հ՝որի՞ չի գա հ՝ոդա։

Կեսին,— Վոլլա, մենք էկեր ինք, մեր ամոթու չի գա։

Կբերին, կշինին կահֆա մե դիտան Քյուչուկ Ահմադին, խելք գիգա գլուխն, ըդ Քյուչուկ Ահմադն ա կեսա.

— Ախպրտիք, ըդ Օսկի ծամին ասեք թրխ իգա։

Ըդ ախպրտիքն ա կվերցուն կեսին.— Օսկի ծամ հ'ո՞ւսա ա էստեխ։

Կեսա.— Ի՞նչպես հ'ուստ ա, հ'որի՞, ի՞նչ էղեր ա։

Կեսին.— Քու տուն ավիրի, դու գացեր իք Օսկի ծամի խետ լոխկացեր իք, ծամ մի գացեր ա թագավորի սարի հ'առեճ էլի դուրս, թագավորն ա լողվոր ճամխե, խանի բերեր ա, էդքան մարթ առեր էկեր ա չգիցած օր թը ինչ էղեր ա, ջադուքար պառավ էկեր ա, ըսեր ա. «Դու ղէդ ծամ տեսեր ես, հապա իդրա տեր տեսիս, ի՞նչ կեսիս»։ Թագավոր լէ էդ պառվուն կիշռանով օսկի տվեր ա, ճամխեր ա ըդտեխ, էկեր ա դրեր ա վըր Օսկի ծամուն օր քու խունար խարցուցա։ Էն լէ խարցուցեր ա, պառավ անկանջ էրեր ա, դու լէ ըսեր ես. «Իմ խունար իմ թուրն ա». էն լէ քու թուր քաշե, տարե թալե ծովու մեշ, դու մեռեր իս, պառավ լէ առի զՕսկի ծամ ու գացե, տարե տվի թագավորին։ Օսկի ծամ լէ մեկ ծեռ աղու ա բռնե, մեկ լէ խանջալ, օր քառսուն օր ուրին օր ուզեր ա, օր. «Քառսուն օր ես Քյուչուկ Ահմադի ետև պըտի ես սուք կապիմ, Քյուչուկ Ահմադն էկավ՝ էկավ, հարգե չէկավ, կպսակվիմ վըր թագավորինա։ Ես Հնգստանու քաղաք իչկեցի իմ թուղթ. էսպես բաներ հ'ելեր ա քու գլոխ, ես էլեր իմ, առեր իմ ղիմ ախպեր, էկեր իմ։ Իշթա մենք էկանք քու վրեն տեսինք, օր թը դու մեռուկ իր, շատ լացինք, լալուչքինք, հ'ելանք գացինք ծովու ափ, լողվոր ախպեր մտավ մեջ ծովուն, քու թուրը օլորտավ, էրկու անգամ մտավ, չկերցավ խանեց, մեկ լէ մտավ ու թուրն հանեց։ Խանեցինք, առանք էկանք, էցկեցինք կալան, դու սախցար։

Քյուչուկ Ահմադն ա ըսեց.— Վնաս չունի, ախպեր, հ'ելեք էրթանք հ'օցքի։

Հ'ելան ինոնք, ուրանց մալեր բարձան ուրանց դևեք, բարձան, ըդ Սև դևու քոշկեն հ'ելան, էկան հ'ելան կարմիր քոշկ։ Կարմիր դևի կնիկ Քյուչուկ Ահմադ բերեց ուր պզտիկ ախպոր վերեն։ Ըդտեխաց ապրանք լէ, էլի բարձան վըր դևեքներուն, էլան ընկան ճամբախ ու էկան, էկան խասան սիվտակ քոշկ։ Սիվտակ դևի կնիկ լէ փսակեց վեր միջնեկ ախպոր, ըդտեխաց ապրանք լէ վերցուցին էկան զէն տեխեն, էկան խալիվորու մոտ, իրեք ճամխու կցվան, կանան։

Տեսան օր թը խալիվոր էդտեխն էր, ըսին.— Բարի օր քըզի, խալիվոր։

Խալիվորն էր ըսեց.— Աստծու խեր բարի քըզի, Քյուչուկ Ահմադ,— ըսեց,— Քյուչուկ Ահմադ, չէ օր ես ըսեցի թե էսա ճամխով մի էրթա։

Քյուչուկ Ահմադն ըսեց.— Աստծուց բարի ախըր ինչ օր էղավ, էղավ։

Ըդ իրեք ախպերն ին դելին ըդ խալիվորի հ՝առճև ուրանց մալ հ՝ըմեն կիսին, ինչ օր դևեքներու մալ ու բան ա, հ՝մեն ուր ախպըրտոց հետ կկիսա։ Քյուչուկ Ահմադ ուր փայ լէ գիտա ախպրտոց, կեսա.

— Ախպրտի՛ք, աստված ձեր խետ էղնի, իդհախս գացեք։

Ախպրտիքն ա կեսին.— Իլահի դու դոր կէրթաս, մենք լէ դիգանք։

Կեսա.— Իլահի դուք չպիտի գաք, դուք գացեք, դուք խասաք ծեր մուրազին։ — Ըդ Քյուչուկ Ահմադն ա, ինոնց խաթըր կառնի, խուրչին օսկին կթալա թև, զիդոնք ճամբախ կդրա, կեսա.— Դուք գացեք ձեր տներ. չէլի, չէլի ձեր իտև իշկիք, իմ խոսք մ՝ուտեք, ես կէրթամ Օսկի ծամին, ես կէրթամ հ՝ոդա, հարգե կերցա՝ կբերիմ, հարգե չկերցա՝ կդառնամ գիգամ։

Քյուչուկ Ահմադն ա դընգի խետ ճամխու, խաթըր խալիվորուց կառի։

Խալիվորն ա կեսա.— Քյուչուկ Ահմադ, էս ծիով դու ի՞մալ պտի խասիս քու մուրազին, մանցի օր Օսկի ծամ կփսակին վըր թագավորին,— կեսա,— մեկ օր ա մացեր, համա քու ճամբախ քսան օրվա ճամբախ ա։

Քյուչուկ Ահմադ կեսա.— Խալիվոր ջան, ապա ես զարկիմ ընձի սպանի՞մ։

Խալիվորն ա կեսա. — Դու կեցի օդի, ես քըզի պտի խասում քու մուրազին։ — Խալիվորն ա, կկղանչա, կեսա,— Ավազան-գավազան քաման քեշ, արեք օր թը Քյուչուկ Ահմադ խասուցեք ուր Մուրազին։

Ավազան-ղավազան քաման քեշն ին օր կլսին, էն սահաթին համան կվերցուն, կտանին Զինումաչինու քաղաք կդնին։

Էդի ա, Քյուչուկ Ահմադ կեսա,— Ավազան-գավազան քաման քեշ, դու գացեք, աստված ծե խետն էղի։

Քյուչուկ Ահմադն ա կէրթա մըշ քաղքին, կաչկա օր թը դոլեր ղուռնեք կզարկին, կխաղան, կեսա. «Վոլլահի, կա չկա էսի Օսկի ծամի խարսնիսն ի կէնին»։ Կէրթա պառվու մի տուն, կեսա.

— Պառավ ջան, տեխ մի տուր ընձի, իմ ծիուն, հարի լուսուն կէրթանք։

— Ախ,— կեսա,— լաո՛, ընձի տեխ ո՞ւստա։

Օր կեսա «տեխ ուստա», կխանա ճանկ մի օսկի գիտա, կե-

սա.— Տեխ մի տուր ընձիկ, ես ու իմ ծին նստինք հարի լուսուն։

Ըդ պառավն ա ծծում վըր ծծումի կկոտրա, ըդ ճանկ օսկու խամար, տեխ մի գիտա, ընդրա ծին կկապա, էդի կնստի, էդի ա գելի կէրթա մեջ քաղքին կօլորտի։

Գիգա կաչքի օր թը հանդե Օսկի ծամի խարսնիսն ա։ Գելի գիգա, կեսա.

— Պառավ, էս ի՞նչ խարսնիս ա։

Կեսա.— Էդի Քյուչուկ Ահմադի կնիկ Օսկի ծամի խարսնիս ա։ Պառավ գնաց Քյուչուկ Ահմադն սպանեց, առավ Օսկի ծամ էկավ։

Կեսա.— Պառավ, աչեպ դրը չփսա՞կած ին։

Կեսա.— Չէ՛,— կեսա,— լաո՛, Օսկի ծամ ծեռ մի աղուն առե, մեկն խանջալ, իսկի խողածինի երես հ՚ուհու չտեսեր ա։ Քառասուն օր ուրին օր ա առեր ա, Քյուչուկ Ահմադի ետև պտի սուք պահի, իշթա էսօր ընդրա օր թմեր ա, պտի իրիկուն փսակին։

Կեսա.— Պառավ ջան, կարիբ մարթ կթորկի՞ն էրթա ըդ խարսնիք։

Կեսա.— Լաո՛, հ՚որի՞ չթորկին, թավլեն ա թարթկած ամե մարթ ուրին կխաղա,— կեսա,— օր թը կէրթաս խաբսնիք, մեկ դին կնստիս, չէլի էլիս կանիս, օր թը էլիս կանիս, տղե մի հ՚ոդա քովընդի գլոխ բռներ ա, էրկրթե ճոկան ծեռն ա, անուն Շավալաղ ա, չէղի էլիս կանիս, որն օր հ՚ելավ կանավ մեջ խարսնիսին, ջղարա կպուց, մե չափալախ օր զարկեց, ըդրա գլոխ մեկ շաբաթվա ճամբախ կէրթա։

Կեսա.— Չէ, պառավ ջան, ինչի՞ կկանիմ, կէրթամ, ընձի խամար կնստիմ, թըմաշա կէնիմ, գելիմ գիդամ։

Ըդ տղեն ա, կէրթա ճրագ սան հ՚առեճ կնստի։ Կտեսի օր հանդե իմալ օր պառավն ըսեր ա, էդպես ա։ Թռավ ճրաք բերեց ուր ջղարեն կպուց։ Ըդ Շավալաղն էր ուրիշ տղի մե ըսեց.

— Գնա ինա մարթուն ասա, չէղի հ՚էլի ճրագ բերա ջղարեն կպու, ուր նստուկ տեխեն թըխ չելի կանի,— կեսա,— կղարկիմ ուր գլոխ օր թը յոթն ավուր ճամբախ էրթա։

Ըդ տղեն ա գիգա կեսա.— Տղա չէղի էլնիս կանիս, Շավալաղ կզարկա քու գլոխ յոթն ավուր ճամբախ կէրթա։

Ըդ Քյուչուկ Ահմադն կեսա,— Կարիբ մարթ ենք, էլ չելիմ կանիմ։

Էն գախ Շավալաղ գիգա Քյուչուկ Ահմադի մոտ, էդ տղեն ա էլի կթռի ճրագ կբերա ջղարեն կկպու։

Շավալաղն ա կեսա. «Կարելի ա ըդ տղեն չգացե ըսե ըդրան». կղանչա զտղեն, կեսա.

— Տղա՛, տղա՛, արի ըսիմ քըզի։

Կեսա.— Ի՞նչ ա։

Կեսա.— Ինա կարիբ մարթուն չգացի՞ր ասիր։

Կեսա.— Վոլլա, գացի ըսեցի։

Կեսա.— Մեկ լէ գնա ասա։

Մեկ լէ կէրթա Քյուչուկ Ահմադին կեսա.— Տղա՛, չէ՞ օր է։ քըզի ըսեցի մ՝ելնի կանի։

Կեսա.— Ներողութեն կէնիս, վոլլա մոռցա։

Ըդ տղեն ա կեսա ու կէրթա։ Շավալադ ա էլի դիգա իդրա դեմ. Քյուչուկ Ահմադ գելի, էլի ճրաք կբերա չրազեն կկպու։ Էն Շավալադըն ա կկանի վեր օտաց ու չափալախ մի կայիմ կղարկա։ Նա չ՝րագ Քյուչուկ Ահմադի ծեռնեն կպատի, նա ջղարեն ծեռնեն կթռթի, իսկի չգինա օր ուրին կզարկա։

Ըն Շավալադն ա կեսա.— Է՞յ աստված, էն դըրբ օր ես զարկի իդրան, ու իդրա վիզ չթռավ, ըդ իմա՞լ մարթ էր (Ըդտեխ Քյուչուկ Ահմադից կվախենա)։ Կեսա. «Վոլլա մեկ լէ էրթամ գիգամ կղարկիմ, հարգե վիզ թռավ, թռավ, հարգե չթռավ՝ կթորկիմ կփախիմ»։

Ըդ խարսնիքի մեջ լէ էնպես գողտու քոռ ու փոսթ ընկե իրարու մեջ, կեսին. «Տո, էդ իմալ իդրա վիզ չթռավ»։

Շավալադն ա ըդտեխ կզվռնա գիգա, Քյուչուկ Ահմադի դեմ կկանի։ Քյուչուկ Ահմադն ա էլի ջղարեն ծեռ գելի ճրադ կբերա օր թը ջղարեն կպու։ Շավալադն ա կկանի մե օտաց վրեն ու չափալախ մի կզարկա Քյուչուկ Ահմադին։ Քյուչուկ Ահմադն ա նա ջղարեն ծեռնեն կպատի, նա ճրագ ծեռնեն կթոթի։

Ըդ Շավալադն ա կեսա,— Գիտի, փախեք, դիտի փախեք խարսնիքի գլխին։

Օր կասի փախեք, ըդ Քյուչուկ Ահմադն ա կաչկա օր թը իսկի մե մարթ չմնաց մըջ խարսնիսին, համա ֆինո վըր ղորին կքելա կէրթա կթալին կփախին։

Ըդ Շավալադն ա կէրթա, կէրթա ուր տուն, կեսա.

— Մայրիկ, գիտի, ելի փախի, էսպես մարթ մե էկեր ա խարսնիսի մեջ։

Գելի կէրթա օր թը ուր ծին քաշա փախի, կտեսի օր հանդե Քյուչուկ Ահմադի ծին լէ հ՝ոդա կապուկ ա։

— Դո,— կեսա,— մայրիկ, ըդ վի՞ր ծին ա։

Կեսա.— Լաո՛, էն կարիբ մարթու ծին ա, օր էկավ խարսնիս,— կեսա,— լաո՛, արի մը վախենա, էտի քու ախպերն էր, քսան տարի էր օր գացեր էր կարիբութեն։

Կեսա.— Ըն իմ ախպե՞րն ա։

Կեսա.— Խա։

Մեկն էլ տեսին օր թը Քյուչուկ Ահմադ գիգա տուն։

Շավալադն ա կէրթա ինոր ախուն կմտնա քունջ մի։

Քյուչուկ Ահմադ կեսա.—Ցա՜, իգա մարթ հ՚ո՞րի ա մտե հ՚ոդի։

Կեսա.— Վոլլա, իմ տղեն ա, քու ախուն չչխնա իգա հ՚ոդա։

Կեսա.— Ես իդրան ի՞նչ կէնիմ օր, ես լէ իդրա պես խողածին իմ, արի, արի, ես լէ քու ախպերն իմ, հ՚որի՞ կվախենաս։

Ըդ տղեն ա, գիգա ուրին կթալա ըդրա օտաց, կեսա.

— Ախպեր, ես քըզի մեղա աստծու։

Կեսա.— Ախպեր, հ՚որի՞ մեղա աստծու։

Կեսա.— Վոլլա, ես քըզի խարսնստուն էրկու չափալախ զարկեցի։

Կեսա.— Ցա՜, դու ընձի երդ իս զարկեր իս,— կեսա,— վոլլա, ես չիմացեր իմ ընձի զարկեցիր։

Կեսա.— Օր չիմացեր իս, չիմացեր իս։

Ընդեխն ա Շավալադ շատ կվախենա։

Ծեն կցրվի քաղքի մեշ, կեսին՝ էսպես քաշ մարթ էկեր ա քաղքին մեջ։

Օսկի ծամն ա կլսա, կեսա. «Վոլլա, կա չկա, էդի Քյուչուկ Ահմադն[1] ա էկեր ա»։

Ըդ Շավալադն ա գիգա ըդրան մեղա աստծու գիգա։

Քյուչուկ Ահմադ կեսա.— Շավալադ, դու գինա՞ս ես որն իմ։

Կեսա.— Ես ինչ գինամ դու ո՞րն իս։

Կեսա.— Ես Քյուչուկ Ահմադն իմ,— կեսա,— Օսկի ծամ իմ նշանլուն ա։

Ըդտեխն ա օր կեսա.— «Օսկի ծամ նշանլուն ա», Շավալադն կեսա.— Չէ, չէ։

Կեսա.— Խա, վոլլա։

Շավալադն ու Քյուչուկ Ահմադն ա գելին դընգին քաղքի մեջ, զթագավորու վիզ կզարկին, զթագավորի վազիրներուն լէ կզարկին։ Կէրթան կօլորտին զպառավ կգտին, ըն պառավ օր գնաց զՕսկի ծամ բերեց, կառին զպառավ գիգան, ծառ մի Քյուչուկ Ահմադ կբռնա, ծառ մի Շավալադ, կառին գիգան կկպուն իրար։ Չէգ պառվու մե ոտ կկապին մե ծառ, մեկ լէ ընծառ ու ծառ կթորկին։ Պառվու մեկ շախկ կմնա էն ծառի դեն, մեկ լէ կմնա էն ծառի դեն։

Ըդ Քյուչուկ Ահմադն ա գելի Օսկի ծամ ըդ տեխեն կառի։

---

1 Բն. Օսկի ծամն ա էկեր ա (Ս. Կ.)։

Քյուչուկ Ահմադ օր զթագավոր կսպանա, Ն՞ոդի կնստի թագավոր։ Ջուաբ կէրթա ուրիշ թագավորի օր թը էսպես զոռլի թագավոր մե էղեր ա, Քյուչուկ Ահմադ կա, էկե զթագավորութեն վերցուցե. նստի թագավորու տեխ։

Ըդ թագավորու անուն լէ Զուլում թագավոր կէղի։

Ըդ Զուլում թագավորն ա ջուար կճամխա վրը Քյուչուկ Ահմադին, կեսա. «Քու ծին էդտեխեն ինատեխ իմ ծիուց ֆալակերեր ա (հղիացեր է), իմ ծիու քուռակ ճամխա իգա»։

Քյուչուկ Ահմադ կեսա. «Էդ իմա՞լ էստեխեն էնտեխ ֆալ կուգին Ն՞իրարուց». կճամխա ուր քաղքի մեջ, ինչ օր մարթ կբերա օր թը իսրա պատճառ մանեն ինչ ա։

Կեսա.— Որ իդա պատճառն իմանա, էրթա թագավորին ջուաբ իտա գա, իմ թախտից ինչ օր թը ուզա՝ տամ, թու մարթ մի չկա օր թը ասա, ես էրթամ ջուաբ իտամ գամ։

Ըդ թագավորի վոզիրն ա կխեծի ուր ծին ու էդա էրկիր ման գիգա, կեսա. «Ես պտի օլորտիմ, աչեփա մե խելոք մարթ գտիմ. էրթա ըդ թագավորի պատասխան իտա, իգա»։

Ըդ վոգիրն ա կօլորտի, չօլորտի թու մարթ մի չկարա դտի։ Օր մի կէրթա կաչկա օր թը հանդե խոտրղներ օր տավար կարծան. կաչկե օր թը հանդե օճախ դրած ու կերակուլ կէփին ուրանց։ Հոտաղներ կաչկին օր թը իդա թագավորի վոզիրն ա, մեծ մարթ ա։ Իդա խոտրղներուն լէ ամեկ ուրանց ձող մի շինած ձի, խեծած ու խառ դիգան, տնազ կէնին, մեկ էղե աղա, մեկելտանք էղած ին չիփ խոլամ, ինգած ին աղի ետև կէրթան դիդան։ Թագավորի վոգիրն ա. «Վոլլահի իգա խոտրղներու մոտ բան մի կա, խելոք մարթ մի կարելի ա էղի պտի էրթամ խարցում»։

Ըդ վոգիրն ա կէրթա կկանի իղոնց մոտ, կաչկա օր ամեն էկան ուրանց ծիանք կապեցին կանան, ծեռ կապեցին ու կանան ուրանց աղի Ն՞առեճ։Ըդ հոտրղներու աչք օր կքիսի վոզիր, դալին Ն՞առեճ կկանին, կբերին փըշը մը կանանչ-մանանչ կդնին վոզիրի տակ՝ նստի։ Բերին վոզիր խաց կդրին։ Ըդոնք օր խաց կուտին կպրծին, ըդոնք խորաթա կէնին, կդրուցին։ Ըդ խոտրղներու աղեն կվերցու, թագավորու վոզիրին կեսա.

— Վոզիր, դու ինչի՞ կօլորտիս։

Կեսա.— Իսա աշխար մեկ խելոք մարթ մե չկա,— կեսա,— Զուլում թագավոր դրեր ա իմ թագավորու վրեն, օր թը. «Քու ծին իմ ծիուց ըդտեխեն ֆալակերեր ա, իմ քուռակ ճամխի գա». ես լէ խելոք մարթու մի կփնտրիմ, թը էրթա պատասխան իտա, գա։

Խոտրղներու աղեն ա կեսա.— Վողի՞ր, քու թագավոր ի՞նչ գիտա ընձիկ օր թր ես էրթամ պատասխան իտամ, հ՚իգամ։

Կեսա.— Հմա արի ուր մոտ, թախթից պրծի, ինչ ուզիս՝ գիտա։

Էգի ա կեսա.— Դե, գնա քու թագավորին ըսա, ըսա ես էսպես չկերնամ իգամ, թրխ ճամխա քառսուն խատ լավ ծի, հ՚մեն մե թաուր, քառսուն ծեռք շոր հ՚մեն մե թաուր շոր, քառսուն խատ թվանք, ճամխա իգա, օր թը մենք խագինք, խփվինք, խեծինք իգանք, թը չէ՝ իգա շորերով մենք հոտաղ մարթ ենք, կերնա՞նք իգանք թագավորու էրես։

Ըդ վոգիրն ա, գելի կէրթա ու թագավորու մոտ, կեսա, իշթա. — Թագավոր սախ կենա, ես էտրմլա քառսուն խատ խոտաղ իմ տեսի, ընդոնց լէ մեկ աղա կա,— կեսա,— ըսեց էսպես շորեր, էսպես ծի, էսպես թվանք ճամխա իգա օր թը մենք իգանք, էրթանք պատասխան իտանք, գանք։

Քյուչուկ Ահմադ գելի քառսուն խատ ծի, հ՚մեն մե թաուր, քառսուն ծեռք լէ շոր, քառսուն խատ լէ թվանք կառին կէրթան չոլ՝ ըդ խոտրդներուն մոտ։ Ըդ խոտրդներն ա ուրանց քրջեր կթափին, ուրանց լավ շորեր կհագին, թվանքներ կթալին ուրանց թև, գելին կխեծին ուրանց ծիանք։ Ու գելին կխեծին, աղեն դընգի հ՚առեճ, մեկելտանք լէ դինին ետև։ Ըդ աղեն ա կէրթա թագավորի սարի մեջ, թագավորի հ՚առեճ, յոթ տեխով ծեռ կկապա, յոթ տեխով կկանին։

Աղեն թագավորին կեսա.— Թագավոր սախ կենա, ի՞նչ կեսիս ընձի, ես էրթամ Զուլում թագավորի պատասխան իտամ, իգամ։

Կեսա.— Զուլում թագավոր դրեր ա իմ վրեն, ըսեր ա, ըդտեխ քու կսրախ իմ ծիուց ըստեխեն ֆալակերեր ա, իմ քուռիկ ճամխա իգա։

Կեսա.— Թագավոր սախ, դինա՞ս ինչ պտի տաս ընձի, օր թը ես էրթամ պատասխան իտամ, հ՚իգամ։

Կեսա.— Իմ թախթից պրծի, ինչ օր թը ուզիս՝ տամ։

Ըդ տղեն ա, թագավորից իզին կառի, ու գելի գիգա։ Գիգա դընգի հ՚առեճ խոտրղներն ին դընգին ետև, կքշի՞ն, կքշի՞ն Քյուչուկ Ահմադի խողի մեջեն գելին։

Խոտրղներու աղեն կվերցու խոտրղներուն կեսա.

— Տես, տղաք, հանդե մենք մեր թագավորի խողի մեջեն հ՚ելանք, կմտինք Զուլում թագավորի խողի[1] մեջ, ինչ խադար շուն օր

---

[1] Բն. խողի չիք (Ծ. Կ.)։

թը գիգա ծղի ռաստ, զարկեք ու սպանեք, իսկի մի թողեք սաղ պրծի։

Իդոնքն ա գընգնին իդա խողի մեջ, իգոնց շներ կփիթցուն ու կէրթան։

Ջուաբ կէրթա Ջուլում թագավորին, կեսին. «Վոլլա մե մարթ փայտա էղեր ա, քու խողին մեջ, քառսուն ծիավորով,— կեսա,— իսկի շուն չթորկեց քու էրկրի մեջ, հ՚մեն սպանեց»։

Ըդ թագավորն ա ասքար էնեց, գնաց ըդ քառսուն ծիավորու վրեն։ Ըդ քառսուն ծիավոր բռնեցին, առան գացին թագավորի մոտ։

Էլան թագավորի մոտ, ծեռ կապեցին, կանան թագավորի մոտ։

Ջուլում թագավորն ըսեց.— Ա՛յ տղա, դու ի՞նչ մարթ իս։

Ըսեց.— Ես Քյուչուկ Ահմադ թագավորու խողի միջի մարթերն իք։

Ըսեց.— Դուք հ՚որի՞ իմ էրկրի շներ դիպ սպանիք էկաք, ըդ շներ ի՞նչ էրած ան ծըզի օր սպանիք, էկաք։

Ըսեց.— Ըդ շներ դեռ բան չէ՞րած ին մըզի։

Թագավոր վերուց ըսեց.— Ապա ի՞նչ էրած են ծըզի հալբաթ։

Ըսեց.— Գիլանք (գայլեր) մեր երկրի օչխար չթորկեցին, հալբաթ իդա շներ ինչի չիգան մեր էրկրի գիլանք խեխթին, մեր երկրի օչխարներ դիպ կերան։

Ջուլում թագավորն ա կվերցու կեսա.— Այ տղա, ծեր էրկիր դո՞ր, մեր էրկիր դո՞ր, հալբաթ իդա շներ իմա՞լ պտի գեն ծեր գիլանք խեխթին, օր թը ծեր օչխրներ չուտին։

Կեսա.— Օր թը ծեր էրկիր դո՞ր, մեր էրկիր դո՞ր, իմա՞լ իմ թագավորի ծին քու ծիուց ընդեխեն հարի հ՚ոգա ֆալակերեր ա, օր դու ճամխած իս։

— Քու խելքութենով դու ընձի կապեցիր։— Էլավ էդտեխ Ջուլում թագավոր մե լավ նշան մե կախեց իդրա վզեն։

Ըդ թագավորն էր վերցուց ըսեց.— Տղա՛, դու քու թագավորից շա՞տ հազ կէնիս, կըսիս։

Ըսեց.— Ինչի՞ հազ չէնիմ ես իմ թագավորուց, շատ հազ կէնիմ։

Կեսա.— Տղա՛, հարգե ղու զարկիր էս կպրե գետն հ՚ընցար, չիս քու թագավորից շատ հազ կէնիս, լավ տղա իս, հարգե չէ, չիս հազ չէնիս, թագավոր կխափիս։

Ըսեց.— Թագավոր սախ կենա, առ էկո քու մարթեր քանի մի թըխ զարկեն հ՚ընցին, ես լէ զարկիմ հ՚ընցիմ։

Վերցուց ըսեց.— Տղա՛, վոլլա, դու քու թագավորուց հաղ չէ-նիս։

Ըսեց.— Թագավոր սախ կենա, ես էն խաղար թագավորուց հաղ կէնիմ, օր թը, քենի իմ շան սախ ա, օր թը զիկ թալիմ խեխ-թիմ ինչպե՞ս պտի հաղ էնիմ։

Ըսեց.— Տղա՛, լաո՛, լուսուն շարթմ լէ կկապիմ, էնիր չխո էնիր, չէնիր չխո քու վիզ կղարկիմ, չթորկիմ հ'ոցքի սախ էրթաս։

Թագավորն ա, գելի ծմերուկ մի կդրա փարցր մնրեթի գլոխ, կնսա.— Տղա՛, հարգե քու ծիով թուր զարկեցիր բերեցիր ցածր, չխո կպրծիս, օր չբերեցիր, չխո քու վիզ կղարկիմ, չթողիմ դու սաղ պրծիս.

Ըդ տղեն ա կխեծի ծին։ Ծին ա գելի զրուցք, կնսա.

— Տղա, ընծի խառ գիտաս,— կնսա,— ընծի իրեք չորս խառ վըր իրարու թագավորի սարի հ'առեճ գիտաս, քենի օր թը իրեք պուտ քրտինք չէղեր ա իմ անգնչի ծերի վրեն, չէղի ընծի քշիս ծմերկի դեն, երբ օր թը իրեք պուտ քրտինք տվեց իմ անգշներու վրեն, ջուխտ մի զանգու կղարգիս մրեն ու կքշիս ծմերկի դեն։

Ըդ տղեն ա կէրթա սարի հ'առեճ, կէրթա ու գիգա։ Թագավոր լէ ուր քաղաքացիք կանած թամաշա կէնին։ Էդ ու մշկներ խառ գիտան կէրթան ու դիդան։ Քենի մե խառ օր գիտա, քաղաքացիք կնսին՝ «էդմլա պտի էրթաս զարկիս ծմերուկ առիս իգաս մնրեթի գլխուց». դնաղ կէնին (կծաղրեն)։ Էդ ա խառ գիտա գիգա, տեսի օր թը իրեք պուտ քրտինք ծիու անգնշներու վրեն ին։ Տղեն ա ջուխտ մի զանգու օր թը կզարկա ծիուն, ծին ա կֆռֆռա ու կթռի մնրեթի դեն, էնպես կթռի գելի մնրեթի գլոխ օր թը, մե մարթաբաժ էլ մնրեթից փանցր կելի, տղեն զծմերուկ կվերցու ու առ հա՛ կպա-լանգրկա թագավորի հ'առեճ։

Ըդ թագավորն ա կղանչա տղին ու կնսա.— Էսա իրեք շարթ լէ թըմմավ, իրեք նշան կկախա տղի վզեն, բանմ լէ տղին բախշիշ (նվեր) գիտա ու գելի խաթըր կառի, կխեծի ու ուր մշկներու խետ գիգա ուրանց էրկիր։ Գիգա ուրանց թագավոր Քյուչուկ Ահմադի մոտ։

Քյուչուկ Ահմադն ա կաչքե օր թը իրեք նշան կախուկ է իդրա վզեն։

Կնսա.— Տղա՛, խալալ էղի քըզի։— Տղին ա կնսա.— Տղա. հ'ուզա՝ իտամ քըզի։

Կնսա.— Ես օր թը կուզիմ մե վոզիրութեն տաս ընծի, ապրիմ։

Ըդ տղեն ա էնեց ուր վոզիր։ Հ'ելավ ըդ տղին քոշկ ու սաքե փսակեց էդ տղին։

Քյուչուկ Ահմադն էր, օր թը պրծավ ըդ Զուլում թագավորից. յոթն օր, յոթ գիշեր, յոթն դհոլ, յոթ զուռնա քուսան բերեց, ուր խարսնիս էրեց։ Ընդոնք հասան ուրանց մուրազին, մենք լէ հասնինք մեր մուրազին։

Էրկնուց իրեք խնձոր իջավ, մեկ լսողին, մեկ տեսողին, մեկ լէ անկանչ էրողին։